ԿԱՐԾԻՔ

Իզաբելլա Իսկանդարյանի «Աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի իրականացման հիմնախնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում» թեմայով ԺԲ.00.02- «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Իզաբելլա Իսկանդարյանի «Աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի իրականացման հիմնախնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությամբ բարձրացված խնդիրներն արդիական են:

Հեղինակն աշխատանքի ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը և մատնանշում, որ 1995թ. ՀՀ Սահմանադրության ընդունումից ի վեր աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանադրական ամրագրումները կրել են բովանդակային փոփոխություններ, այնուհետև սահմանում ատենախոսության նպատակներն ու խնդիրները, ստացվող արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, ներկայացնում թեմային առնչվող մասնագիտական գրականությունն ու ատենախոսության նորմատիվ, փորձառնական և մեթոդաբանական հիմքերը:

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքը ուսումնասիրել սոցիալական շուկայական տնտեսական կարգի սկզբունքների ներքո, վեր են հանվել աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի բովանդակությունը, պաշտպանության հիմնախնդիրները:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակն անդրադարձել է աշխատանքի ազատ ընտրության իրավունքի տեսահիրավական և պատմական հիմնահարցերին, ներկայացրել է աշխատանքի ընտրության ազատության և աշխատանքի ազատ ընտրության իրավունքի փոխկապակցվածությունն ու տարբերությունները: Երկրորդ գլխում ուսումնասիրել է աշխատանքի ազատ ընտրության իրավունքի միջազգային իրավական կարգավորումները, աշխատանքի ազատ ընտրության իրավունքին վերաբերող մեկնաբանությունները, առաջարկությունները, դատական նախադեպերը, ինչպես նաև տարբեր երկրների սահմանադրական դատարանների դիրքորոշումները:

Երրորդ գլխում հեղինակը վերլուծել է Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունն ու զարգացման միտումները: Եզրակացությունում արել է հետևություններ և ներկայացրել օրենսդրական բացերի լրացման և ոլորտային քաղաքականության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Աշխատանքի հիմնական արժեքներից է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի ներքո աշխատանքի իրավունքին և աշխատանքի ազատ ընտրության իրավունքին վերաբերող մեկնաբանությունների, դատական նախադեպերի, ինչպես նաև տարբեր երկրների սահմանադրական դատարանների որոշումների ուսումնասիրությունը:

Այդուհանդերձ, առկա են որոշակի նկատառումներ, որոնք հաշվի առնելու պարագայում, մեր կարծիքով, կբարձրանա աշխատանքի գիտական և գործնական արժեքը.

1. Պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթում (նաև 51-րդ էջում) հայցորդը նշում է, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը դրսևորվում է նեգատիվ և պոզիտիվ բովանդակությամբ: Ընդ որում նեգատիվ բովանդակության մեջ նշում է ստրկության արգելքը, հարկադիր և պարտադիր աշխատանքի արգելքը, սակայն պարզ չէ, թե որն է դրա բացասական իմաստը, հակառակը՝ այն իր էությամբ կարելի է որակել դրական:

2. Աշխատանքի առաջին գլխի 1.2 ենթահարցում, նպատակ ունենալով բացահայտել աշխատանքի ազատության բովանդակությունը, հեղինակը նշում է, որ աշխատանքի իրավունքը պետք է առաջին հերթին դիտարկվի սոցիալական և տնտեսական իրավունքների համատեքստում, իսկ աշխատանքի ազատությունը՝ քաղաքացիական ազատության, մինչդեռ հայցորդի կողմից «աշխատանքի ազատ ընտրության իրավունքը» և «աշխատանքի ընտրության ազատությունը» դիտարկվում են որպես աշխատանքի իրավունքի տարրեր: Հետևաբար դժվար է պատկերացնել թե ինչպես կարող է սոցիալական և տնտեսական իրավունքների համակարգում ընդգրկված աշխատանքի իրավունքի բովանդակության տարրերից մեկն առանձին ընդգրկվել քաղաքացիական ազատությունների համակարգում:

Նույն ենթահարցում հայցորդը նախ առանձին ենթահարցերով անդրադառնում է աշխատանքի իրավունքին, աշխատանքի ազատությանը, աշխատանքի իրավունքի և աշխատանքի ազատության հարաբերակցությանը, այնուհետև՝ «իրավունք» և «ազատություն» հասկացությունների լուսաբանմանը, մինչդեռ տրամաբանական էր, որ նախ անդրադարձ պետք է կատարվեր «իրավունք» և «ազատություն» եզրույթների լուսաբանմանը, հետո միայն նշված խնդիրներին:

3. Անհասկանալի է պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթը և չորրորդ կետում արված եզրահանգումը: Աշխատանքի բովանդակությունում առկա

են նաև անհասկանալի ձևակերպումներ (102 էջի 1-ին պարբ. վերջին նախ.[1], 110 էջի վերջին պարբ.[2], 111 էջի 1-ին պարբ.[3]):

4. Եզրահանգման առաջին կետում հայցորդն առաջարկում է «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածում էական պայմանների ցանկում հատուկ նշել կողմերի գրավոր պայմանավորվածությամբ էական համարված այլ պայմաններ»: Սակայն, ինչպես գիտենք ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված է. «Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով»: Իսկ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածով հստակ սահմանվում է. «Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի»:

5. Երկրորդ եզրակացության մեջ խտրականությունից պաշտպանելու վերաբերյալ կառուցակարգերի բարելավման կապակցությամբ հայցորդն առաջարկում է ստեղծել անկախ մարմին, որը հատուկ կզբաղվի աշխատանքի շուկայում խտրական վերաբերմունքի արժանացած անձանց իրավաբանական օգնություն ցուցաբերելով: Նշվածը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Նման տրամաբանությամբ ցանկացած իրավունքի իրացման հետ կապված խտրական վերաբերմունքի արժանացած անձանց համար կարելի է ստեղծել անկախ մարմին՝ իրավաբանական օգնութուն ցույց տալու համար: ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածով հստակ սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

6. 7-րդ եզրակացությունում հայցորդը նշում է, որ չնայած Արհեստակցական միությունների մասին ՀՀ օրենքով սահմանվում է, որ արհեստակցական

---

[1] Նշված առանձնահակությունները հուշում են, որ ՀՀ Սահմանադրությամբ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը զտված է սոցիալական իրավունքների հավակնություններից և աշխատանքի ազատ ընտրության իրավունքը ընտրություն կատարելու սկզբունքային դերակատարում ունի:

[2] Թեև «յուրաքանչյուր ոք» եզրույթն իր մեջ ներառում է ՀՀ քաղաքացուն, օտարերկրյա քաղաքացուն և քաղաքացիություն չունեցող անձին, սակայն պետք է նկատել, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը վերաբերում է «յուրաքանչյուր ոք»-ին, եթե իրավունքը մեկնաբանում ենք միայն պարտադիր կամ հարկադիր աշխատանքի արգելք:

[3] Աշխատելու կամ չաշխատելու կապակցությամբ կամահայտնություն դրսևորելն իր էությամբ բնորոշ է հատկապես մարդուն, սակայն աշխատանքի ընտրության ազատությունը չի սահմանափակվում միայն կամահայտնություն արտահայտելով:

միությունը, արհեստակցական միության մասնակցի (անդամի) իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակով, իրավասու է միջնորդագրով դիմել պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, գործատուին կամ այլ անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով բողոքարկել նրանց գործողությունները (անգործությունը), սակայն, ըստ նրա, բողոքարկումը նույնական չէ միության անդամի անունից դատարան հայց ներկայացնելու իրավասության հետ: Այս առումով լրացուցիչ պարզաբանման խնդիր է առաջանում, թե ի՞նչ է հասկանում հայցորդը օրենքով սահմանված կարգով գործողությունների (անգործության) բողոքարկում ասելով և արդյո՞ք այն իրենից չի ենթադրում դատարան հայց ներկայացնելու իրավասություն, եթե հաշվի առնենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանվում է, որ հայցվորը գործին մասնակցող այն անձն է, որն իր կամ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձի իրավունքների պաշտպանության նպատակով հայցադիմում է ներկայացրել առաջին ատյանի դատարան:

7. Հայցորդը եզրակացության ութերորդ կետում նշում է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված «հարմար» աշխատանքին տրված նկարագրությունները լիովին չեն համապատասխանում միջազգային չափանիշներին և դրա բնորոշման մեջ առաջարկում է ներառել մի շարք չափանիշներ: Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված որոշ չափանիշներ անտրամաբանական են: Մասնավորապես, հայցորդն առաջարկում է հետևյալ չափանիշը. *հարմար չի կարող համարվել այն աշխատանքը, որի վարձատրությունն ավելի ցածր է, քան աշխատանք փնտրող անձի ունեցած նախորդ աշխատանքի դիմաց վարձատրությունը կամ առհասարակ տվյալ ոլորտի համար ընդունված աշխատավարձի շեմը, կամ էլ ցածր է անձին տրամադրվող բոլոր նպաստների հանրագումարից*: Ինչպե՞ս է օրինակ հայցորդը պատկերացնում մասնավոր կազմակերպությունում բարձր վարձատրվող աշխատողի համար հետագայում նման վարձատրությամբ աշխատանքի տեղավորումը: Կամ հայցորդը հղում կատարելով Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի եզրակացություններին, առաջարկում է. *հարմար չի կարող համարվել այն աշխատանքը, որը համահունչ չէ աշխատողի ընտանեկան պարտականություններին*: Սակայն կոմիտեի ներկայացված չափանիշներն էականորեն տարբերվում են հայցորդի առաջարկներից: Օրինակ՝ վերջինի դեպքում մատնանշվում է այնպիսի աշխատանք, որը ոչ թե համահունչ չէ աշխատողի ընտանեկան պարտականություններին, այլ ընտանեկան պարտականություններ ունեցող անձինք ստիպված են փոխել իրենց բնակության վայրը:

8. Եզրակացության 12-րդ կետում հեղինակն առաջարկում է «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված արգելքը չտարածել պարտավորությունների կատարումից ազատված սնանկ ճանաչված ֆիզիկական անձանց նկատմամբ: Նախ՝ անհատ ձեռնարկատիրոջ իրավական

կարգավիճակի առանձնահատկություններից մեկն էլ հենց այն է, որ անհատ ձեռնարկատերն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով: Բացի այդ, նույն օրենքի 1-ին հոդվածով հստակ սահմանվում է, որ անհատ ձեռնարկատեր չի կարող հաշվառվել սնանկ ճանաչված այն ֆիզիկական անձը, որը դիմում տալու պահին չի կատարել *սնանկ ճանաչելու համար հիմք հանդիսացած* իր պարտավորությունները:

Չնայած վերը նշվածին, կարծում ենք, որ՝

1. Իզաբելլա Իսկանդարյանի «Աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի իրականացման հիմնախնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում» վերտառությամբ ԺԲ.00.02- «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին:

2. Ատենախոսության հեղինակ Իզաբելլա Իսկանդարյանին կարող է շնորհվել ԺԲ.00.02- «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավ. գիտ. թեկնածու,դոցենտ Հասմիկ Ստեփանյան
31.05.2021

Հաստատում եմ արտրամագրությունը՝ Հասմիկ Ստեփանյան